ԿԱՐԾԻՔ

Ռուզաննա Տիգրանի Միքայելյանի

«Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը» թեմայով

ատենախոսության վերաբերյալ,

ներկայացված ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ

արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ռուզաննա Միքայելյանի ատենախոսությունը նվիրված է Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնի ուսումնասիրությանը: Հետազոտության նպատակն է կինոթատրոնային տիպի շինությունների ներքին տիրույթների նախագծային նկարագրի, տիպաբանական, հորինվածքային, ոճաբանական և ձևաստեղծման խնդիրների վերլուծությունը: Թեև Հայաստանում կառուցված կինոթատրոնների վերաբերյալ առկա են որոշ հոդվածներ և ուսումնասիրություններ, այնուամենայնիվ ատենախոսությունը արդիական է, քանզի մինչ օրս բացակայում է թեմայի առումով կատարված արվեստագիտական համակողմանի հետազոտություն: Այս առիթով հարկ է նշել նաև, որ սույն ատենախոսությունն առանձին մեթոդական հրատարակությունների բացակայության պայմաններում ինքնուրույն և նորարար աշխատանք է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (Գլուխ Ի՝ «Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի կինոթատրոնների և դրանց ինտերիեր դիզայնի վերաբերյալ», Գլուխ II՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը մինչև 1970 թ.», Գլուխ III՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1970 թ.-ից մինչև 1991 թ.», Գլուխ IV՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1991 թ.-ից առ այսօր»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածական բաժնում հեղինակի կողմից հիմնավոր ներկայացված են ատենախոսության գիտական խնդիրները, գիտական նորույթը, կիրառական արժեքը, մեթոդաբանությունը և թեմայի ուսումնասիրվածության չափը:

Ատենախոսության առաջին գլխում կատարված է Հայաստանի կինոթատրոնների ձևավորման և զարգացման փուլերի, խորհրդային և համաշխարհային իրականության համատեքստում դրանց ինտերիեր դիզայնի և տիպաբանական առանձնահատկությունների վերաբերյալ ծավալուն վերլուծություն: Հանգամանալից ներկայացված է նաև խորհրդային ժամանակաշրջանում կինոթատրոնների զարգացման պատմական ընթացքը, փոխազդեցությունները, միջազգային փորձն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Ուսումնասիրության համար հեղինակի կողմից դիտարկվել են բազմաթիվ արխիվային նյութեր, ինչի արդյունքում բացահայտվել են հետաքրքրական որոշ մանրամասներ:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է խորհրդային Հայաստանում մինչ 1970 թ. կառուցված «Մոսկվա», «Նաիրի», «Հայրենիք», «Կոմիտաս», «Գյումրի», «Հոկտեմբեր» և մի շարք այլ կինոթատրոնների ինտերիեր դիզայնի և հատակագծային առանձնահատկությունների ուսումնասիրություն: Հեղինակը մեծ ուշադրություն է դարձրել հատակագծային, գոտևորման, հորինվածքային, ձայնային և լուսավորության խնդիրներին: Հատկանշական են կինոթատրոնների ներկա և նախկին տեսքի համեմատական դիտարկումները: Հետաքրքրական են որոշ կինոթատրոնների ճարտարապետական ձևերում հայկական անտիկ և միջնադարյան հուշարձանների հետ համեմատական զուգորդումները, որոնց վերաբերյալ հեղինակն ունի նաև գիտական հրապարակումներ: Երկրորդ գլխում անդրադարձ է կատարված նաև 1960-ականների տիպային նախագծով իրականացված կինոթատրոնների ինտերիեր դիզայնին:

Ատենախոսության երրորդ գլխում տրված է 1970 թ.-ից մինչ 1991 թ.-ը մոդեռնիստական ոգեշնչումներով ստեղծված «Դիլիջան», «Ռոսիա», «Գարուն», «Հայաստան» կինոթատրոնների ճարտարապետական և ինտերիեր դիզայնի նկարագիրը: Ներկայացված են կինոդահլիճների հատակագիծն ու գոտևորումը, փռվածքները, դասավորությունը, լուսաձայնային լուծումները:

Ատենախոսության չորրորդ գլուխը նվիրված է 1991 թ.-ից առ այսօր Հայաստանում կառուցված կինոթատրոնների ինտերիեր դիզայնի ոճային ու

հորինվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Այս գլխում քննության են դրված նոր տիպի և ժամանակակից լուծումներով կինոթատրոնների առանձնահատկությունները, որոնք մինչ օրս առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել: Հեղինակը՝ «Սինեմա Սթար» «Կինոպարկ», «Տ'Unique», «Քաջարան սինեմա» կինոթատրոնների օրինակով ներկայացնում է ժամանակի պահանջներով և նորագույն միտումներով կառուցված կինոդահլիճների դիզայներական լուծումները:

Ատենախոսության շրջանակում թեմայի ուսումնասիրությունը կատարված է հայկական կինոթատրոնների ստեղծման ժամանակագրության խմբավորման սկզբունքով: Մեծ ուշադրություն է հատկացված կինոթատրոնների կառուցվածքային և նախագծային մանրամասներին, ծավալատարածական լուծումներին, ձևաստեղծման ժամանակային զարգացումներին և տեխնիկական խնդիրներին:

Ատենախոսության վերջում ներկայացված են ուսումնասիրության հիման վրա կատարված եզրահանգումները: Հատկանշական է Հայաստանի կինոթատրոնների ձևավորման գործում խորհրդային ճարտարապետության գեղարվեստական սկզբունքների, ինչպես նաև ազգային մշակույթի ազդեցությունը:

Ամփոփելով նշենք, որ ներկայացված է բավական ընդգրկուն և բարեխղճորեն կատարված ատենախոսական ուսումնասիրություն:

Բարձր գնահատելով աշխատանքը, այդուհանդերձ ունենք որոշ դիտողություններ՝

1. Արվեստագիտական տեսակետից ավելի շահեկան կլիներ, եթե ատենախոսությունում ավելի ծավալուն ներկայացվեր կինոթատրոնների ներքին գեղարվեստական նկարագիրը:

2. Ուսումնասիրության շրջանակում բավական քիչ տեղ է հատկացված կինոթատրոնների արտաքին ու ներքին տիրույթների դիզայնի, ոճական ու հորինվածքային լուծումների ներդաշնակման վերաբերյալ վերլուծություններին:

3. Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ:

Վերոնշյալ դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսությունը կարելի է համարել հաջողված աշխատանք:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ռուզաննա Միքայելյանի «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու՝

Գայանե ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Գայանե Պողոսյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

21 նոյեմբերի 2023 թ.